

ԿԱՐՆՈ ՇԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ 1829 թ. ԳԵՆԵՐԱԼ ՊԱՍԿԵՎԻՉԻՆ ՈՒՂՂԱԾ ԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԻՐԸ

Կարնո հայ գաղթականների և ցարական կառավարության միջև 1829 թ. վարած բանակցությունների մասին՝ հիշյալ գաղթականներին Ախալցխայի շրջանում բնակեցնելու նպատակով՝ համապատասխան պաշտոնական նյութերը, ինչպես հայանի յե, ամփոփված են Կովկասյան Հնագրական Հանձնաժողովի հրատարակությունների մեջ (Акты Кавказской Археографии. Комиссии, т. VII, стр. 830-832, 852 և այլն): Սակայն այդ գրազրույթյան մեջ չի յերեւում Կարնո հայ գաղթականների անունից խոսող՝ Կարնո առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու (հետագայում վրաստանի հայոց առաջնորդի) բուն «հայցագրերից» և վոչ մեկը:

Այժմ մեր ձեռքի տակ և հիշյալ Կարապետ արքեպիսկոպոսի գիմումներից մեկը, վոր 1829 թվին ուղղվել և գններալ Ֆելդմարշալ Պասկեիչին: Դիմումը մեզ հասել և 2 որինակով, վորոնցից մեկը բնագիրն է, վոր պահվում է Վրացական ՍՍՌ Կենտրոնական Արխիվի գործերում (հայերեն վավերագրեր պարունակող հավաքածվի մեջ), իսկ յերկրորդը, վոր առաջնի թառացի պատճենն է, գտնվում է Ախալցխայի Գավառագիտական Թանգարանի արխիվային բաժնում:

Իսկ վավերագիրը գրված է «ի 1829 ի դեկա. 15-ի Կարին, որ է Արզրում», իր իսկ Կարապետ արքեպիսկոպոսի ստորագրությամբ ու կնիքով և վավերացված է 29 հոգի ժողովրդյան ներկայացուցիչների՝ «նուսատ երեսփոխանների, մահտեսիների և վարժապետների» ստորագրությամբ՝ ու կնիքով: Գրված է մեծագիր՝ լավորակ մի թերթ թղթի վրա, վոր միջից ծավված է և տալիս է 4 յերեսանոց վավերագիր՝ 35,5×49,5 սանտ. մեծությամբ (կողքից կարմիր գծած լուսանցքներով), ուր միմիայն առաջին յերկու յերեսն է գրված, մինչդեռ մյուսները թողված են մաքուր:

Քանի վոր այս վավերագիրը մինչև այժմ ոգտագործված չէ գրականության մեջ և սրա մասին վոչ մի տեղեկություն չի տալիս հարցի շուրջը յեղած՝ Հովակիմ Գեղամյանցի հատուկ ուսումնասիրությունը («Կարապետ արքեպիսկոպոսի կենսագրություն» — «Փորձ» ամսագիր, 1876 թ., №1, էջ 163-206, 1877 թ., №1, էջ 81-112), ուստի և նպատակահարմար ենք գտնում հրատարակել այն այստեղ ըստ հիմնական որինակի, միաժամանակ ծանոթությունների մեջ նշելով և՛ վարիանտները՝ ըստ պատճենի:

Ի դեպ, նշենք, վոր վավերագրի պատճենը հիմնական գրությունից տարբերվում է գլխավորապես նրանով, վոր վերջինս՝ գրված լինելով հա-

սարակ թղթի վրա՝ հունի ստորագրութիւններ վոչ Կարապետ արքեպիսկոպոսի և վոչ ել 29 յերեսփոխանների, մահտեսիների ու վարժապետների:

Վավերագիրը հրատարակում ենք, ըստ բնագրի, հին ուղղագրութեամբ, պատիճների առկա համառոտած գրերը տալիս ենք ամբողջական, բերելով այն շեղատառ:

Վավերագրի ստորագրութիւններն այսպես են. նախ Կարապետ արքեպիսկոպոսինը՝ կնիքով. ապա գալիս են 4 շարք ստորագրութիւններ՝ կնիքներով, վորոնցից առաջինում՝ 9, յերկրորդում՝ 10, յերրորդում՝ 9 և չորրորդում՝ միմիայն 1-ը:

ՁԵՐԴ. ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼՈՒԹԻՒՆ ԳԵՆԵՐԱԼ ՖԵՌԺՄԱՌՇԱԼ ԳՐՖ.
ՊԱՍԿԵՎԻՉ ԵՐԵՎԱՆՈՒ.

Ողորմած Տեր մեր.

Աղերս ի կողմանէ Արքեպիսկոպոսին Հայոց
Կարնոյ քաղաքի և միանգամայն¹ ի դիմաց
իշխանացն հայոց նոյն քաղաքի առ Նորին
Պայծառափայլութիւն:

Ձկնի տիրապետութեան քաղաքիս Կարնոյ ի յաղթական զօրաց Նորին Մեծաշուք Կայսերականի Տէրութեան՝ ամենայն Ռուսաց³ մինչ ցայսօր առանց յափշտակութեան ընչից⁴ և վնասման իրիք մերայնոց՝ խաղաղութեամբ և գովանի հանգստութեամբ ի գեղեցիկ պաշտպանութեան և ապահովութեան անցուցաք զաւուրս մեր:

Ապա յուսամք թէ՛ մինչ արժանաւորեցիմք յատուկ շնորհիւ Ձերին ողորմածութեան⁶ բնակիլ՝ մըշտնջենաւորապէս ի ներքոյ Հովանավորութեան Նորին Բարձրաշուք Կայսերականի Մեծութեան յերկրին Ռուսաց առաւել ևս ունիմք ստանալ անշուշտ⁸ զես գերադոյն ապահովութիւն քան զայս և հատկացեալ խնամոց վայելմունս:

Երևի թէ զօրքն Ռուսաց զկնի քանի՞ ամսոյ թողլոց են զայս նահանգս Էրզրումոյ¹⁰. և մեք ի վաղուց հետէ քաջ տեղեակ գոլով բարբարոսական բարուց օսմանեան ազգին և կառավարութեան՝ գիտեմք, զի¹¹ անշուշտ վտանգիմք:

Եւ որովհետեւ ազգս մեր յայսմիկ¹² միջոցի ականատես իսկ եղև քաղց-բարբարոյութեան և ողորմածութեան Ռուսաց կառավարութեան. վասն որոյ առ ի չվտանգիլ մեր յՕսմանեանց¹³ աղերս արկեալ՝ աղաչեմք և խնդրեմք¹⁴ զպաշտպանութիւն Ռուսաց. և անմիջաբար ի Ձերդ Պայծառափայլութենէ նշանակել վասն նուաստութեան մերոյ գտեղի ինչ արժանաւոր յերկրի Ռուսաց ի բնակութիւն. յորում մինչ ցերկու հազար առւնք հայոց (կամ աւելի և կամ պակաս)¹⁵ ելանելով ի յերկրէ¹⁶ ասաի, բնակիցիմք¹⁷ անդր:

Ուստի ամենախոնարհաբար դիմեմք ահա այսու աղերսական գրութեամբ առ¹⁸ յոտս բարձր Պայծառափայլութեան Ձերոյ, ծանուցանեմք և խնդրեմք¹⁹,

զի եթէ ամենաբարի կամք Ձերդ Պայծառափայլութեան հաճեցի, կամիմք մեք բնակիլ յԱխալցխայ քաղաք և ի մերձակայ գաւառսն նորին:

Վասն որոյ խոնարհութեամբ²⁰ աղերսեմք և հայցեմք²¹ արժանաւորեցողցանել զանարժանութիւն²² մեր գրաւոր պաասխանոյ, որպէսդի և մեք նուաստքս սկսանիցիմք յայսմ հետէ²³ նախապարասաիլ մինչև ցհասանիլ զարնան:

Մնամք ահա ազգովին ակնկալ խնամոց և ողորմութեան շնորհի²⁴ Ձերդ Բարձր Պայծառափայլութեան,

որով²⁵ եմք և մնամք Հանդիսավեհութեան
Ձերոյ յամենայնի²⁶ ամենախոնարհ և հպատակ
ծառայք²⁷.

Ն. ծ. Կարապետ խոնարհ ևպիսկոսլոս հայոց
Կարենոյ և այլոց

(կնիք)

Ստորագրութիւններ.

- | | | | | | |
|----|-----|---|-----|-----|--|
| ա. | 1. | ն | ծռյ | մէի | Գրիգոր Տեր-Սիմօնեան |
| | 2. | ն | ծռյ | մէի | Սիմօն Հա[յ]րապետեան |
| | 3. | ն | | մէի | Հազար Ստեփօեան |
| | 4. | ն | | մէի | Յօհաննէս Էփրիկեանց |
| | 5. | ն | | մէի | Մինաս Ազնաւորեան |
| | 6. | ն | | մէի | Մնացական Սաղաթէլեան |
| | 7. | ն | | | Կարապետ Գրիգորեանց |
| | 8. | ն | | | Ալէքսան Մրսըրլեան |
| | 9. | ն | | | Յակօր Մարութեանց |
| բ. | 10. | ն | | մէի | Սիմօն Մոսթաֆեանց |
| | 11. | ն | | | Ստեփաննոս Թէալիկչեան |
| | 12. | ն | | մէի | Կարապ [ետ] Չատրճեան |
| | 13. | ն | | | Յարութիւն Չօմառեան |
| | 14. | ն | | մէի | Պ[ա]ղտա[սար] Մխօեան |
| | 15. | ն | | | Յարութիւն Մուրաֆեանց |
| | 16. | ն | | | Յակօրջան Մեռլէլեան |
| | 17. | ն | | | Գէորգ Էքսիւղեանց |
| | 18. | ն | | | Նազարէթ մէի-Մուրազեանց |
| | 19. | ն | ծռյ | | Գրիգոր Շիրճեան, վարժապետ հայոց Կարենոյ |
| գ. | 20. | ն | | մէի | Յակօր Դիստոստրեան |
| | 21. | ն | | | Սարգիս Յակօրջանեան |
| | 22. | ն | | մէի | Աղաճան մէի-Գէորգեան |
| | 23. | ն | | | Շիրին Ռառանճր Սարգսեան |
| | 24. | ն | | | Պապոյ Յառնեան |

25.	ն	Պարսամ էնֆիէճեանց
26.	ն	Ալէքսան Տիւտիւքճեան
27.	ն	Յօհաննէս Զիրիպեան
28.	ն	մէի Յարութիւն Միրզէեան
դ. 29.	ն	մէի Պաղտասար մէի-Վարդանեան ²⁸

1. միանգամայն] անմիջաբար եւ: 2. տերութեան] մեծութեան: 3. ըռուսաց: 4. + մերոց: 5. ֆլասման ընաանեաց մերոց: 6. յատուկ... ողորմածութեան abs: 7. բնակել: 8. ունիմք ստանալ անշուշտ] անշուշտ ունիցիմք: 9. քանի abs: 10. զայս նահանգս էրզրումոյ] զէրզրում: 11. գիտեմք, գի abs: 12. յայսմ: 13. յամանցւոց: 14. այստեղ ավելացված է ապա ջնջված են հետեվյալ բառերը. «ի ձերդ ողորմած պայծառափայլութ»: 15. առանց վաւազմի: 16. յերկրէս: 17. բնակեցի: 18. այսու ... ու abs: 19. «ե խնդրեմք» ավելացված է: 20. խոնարհութեամբ abs: 21. + խոր խոնարհութ: 22. զանարժանութիւն abs: 23. յայսմհետէ abs: 24. շնորհի abs: 25. որովք: 26. յամենայնի abs: 27. + զձերդ պայծառափայլ պայծառափայլութ: 28. բոլոր ստորագրութիւնները abs:

Л. Меликсет-Бек

ПОДЛИННИК ПИСЬМА ГЕНЕРАЛУ ПАСКЕВИЧУ ОТ АРМЯН-ЭММИГРАНТОВ
ИЗ КАРИНА В 1829 Г.

(Резюме)

Публикуемый документ—подлинник письма к генерал-фельдмаршалу Паскевичу Эриванскому от 15 декабря 1829 г., за подписью армянского архиепископа Карапета Багратуни и 29 выборных от армян церковных старост, махтеси и учителей, которое (письмо) касается вопроса об устроении в гор. Ахалцихе и его районах армян-эмигрантов из Карина (Эрзерума), переселившихся в пределы б. Российской империи после русско-турецкой войны 1828—1829 г.г. в связи с уходом русских войск из занятых областей Турции.

Письмо дошло до нас в 2-х экземплярах: подлиннике, хранящемся в центральном архиве Груз. ССР, и копии, хранящейся в Ахалцихском Краеведческом Музее. Оно восполняет сведения, содержащиеся в т. VII Актов Кавк. Археогр. Комиссии по тому же вопросу.